



2020թ.-ի ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ  
ԳԾՈՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ  
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՎՐԱ

Տնտեսական զարգացման նախաձեռնությունների կենտրոնն անդրադարձել է սոցիալական վճարներին վերաբերող «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքին համապատասխան 2020թ.-ի հուլիսի 1-ից ուժի մեջ մտնող փոփոխություններին:

2020թ հուլիսի 1-ից (հուլիս ամսվա համար հաշվարկվող աշխատավարձի դեպքում) «Կուտակային կենսաթոշակների մասին»<sup>1</sup> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված պահանջներին համապատասխան՝ չեն հաշվարկվելու «Անձի ամսական համախառն եկամտի՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ սահմանված չափի 180-ապատիկը գերազանցող գումարից (այսուհետ՝ սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն տարեկան շեմ)», որը փոխարինելու է օրենքի 81-րդ հոդվածով սահմանված 500,000 ՀՀ դրամ սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն ամսական շեմը, որը հուլիսի մեկից հետո կազմելու է 1,020,000 ՀՀ դրամ: Նախքան 2020թ.-ի հուլիսը, սոցիալական վճարի առավելագույն չափը կազմել է 12,500 ՀՀ դրամ, և 500,000 ՀՀ դրամ համախառն եկամտի գերազանցող մասի համար սոցիալական վճար չէր հաշվարկվում: Համաձայն «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի՝ 2020թ.-ի հուլիսի 1-ից հետո սոցիալական վճարը կկազմի «10 տոկոսի և 25,000 ՀՀ դրամի տարբերության չափով, եթե աշխատավարձի ամսական չափը գերազանցում է 500,000 ՀՀ դրամը» և առավելագույն վճարն այս դեպքում 77,000 ՀՀ դրամ է կազմելու: Նշենք, որ փոփոխությունը չի տարածվելու 92,620-500,000 ՀՀ դրամ համախառն եկամուտ ունեցող ֆիզիկական անձանց վրա:

Սակայն, համաձայն 81-րդ հոդվածի՝ մինչև ֆիզիկական անձանց եկամուտների՝ եկամտային հարկով հարկման բեռի նվազեցումը «սոցիալական վճարի կեսը, սակայն ոչ ավել, քան 12,500 ՀՀ դրամ, կատարում է պետությունը», ինչպես նաև «կատարվող կուտակային հատկացումների և այդ անձանց եկամուտներից հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարի տարբերությունը չի կարող գերազանցել

<sup>1</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=64546>

ամսական 37,500 ՀՀ դրամը»: Մյուս կողմից էլ, հիմք ընդունելով սույն ԱԺ-ի կողմից 2019թ.-ի հունիսի 25-ին ընդունած «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը, սոցիալական վճարները հաշվարկվելու են հետևյալ կերպ 2021-2022թ.-ի համար (տե՛ս աղյուսակ 1):

**Աղյուսակ 1. Սոցիալական վճարի հաշվարկումը 2021-2022թթ.-ին**

	2021թ.	2022թ.
<b>Աշխատավարձի ամսական չափը</b>	Սոցիալական վճարի չափը՝ հաշվարկված աշխատավարձի նկատմամբ	Սոցիալական վճարի չափը՝ հաշվարկված աշխատավարձի նկատմամբ
<b>մինչև 500 000 դրամը ներառյալ</b>	3.5 տոկոս	4.5 տոկոս
<b>500 000-ից ավելի դրամ</b>	10 տոկոսի և 32 500 դրամի տարբերության չափով	10 տոկոսի և 27 500 դրամի տարբերության չափով

750,000 ՀՀ դրամ համախառն եկամտի դեպքում, վերջինիս 10%-ի և 25,000 ՀՀ դրամի տարբերությունը կազմում է 50,000 ՀՀ դրամ, որից էլ հանենք 12,500 ՀՀ դրամ (որը, կատարում է պետությունը), ապա ֆիզիկական անձի կողմից վճարվող սոցիալական վճարը, 2020թ.-ի հուլիսի համար հաշվարկված, կկազմի 37,500 ՀՀ դրամ, ինչ էլ համախառն եկամտի 10%-ին չի գերազանցի 37,500 ՀՀ դրամից ( $75,000 - 37,500 = 37,500$ ), մինչդեռ, հունիսի համար հաշվարկված սոցիալական վճարի գումարը կազմել է 12,500 ՀՀ դրամ: Իսկ, քանի որ 2021թ.-ին այդ տարբերությունը չպետք է գերազանցի 32,500 ՀՀ դրամը, ապա սոցիալական վճարը կկազմի 42,500 ՀՀ դրամ ( $75,000 - 32,500 = 42,500$ ), իսկ 2022թ.-ին՝ 47,500 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով եկամտային հարկի դրույքաչափերի, սոցիալական վճարների հաշվարկելու մոտեցման փոփոխությունները, որոնք ներկայացվել են աղյուսակ 2-ում, մի շարք աշխատավարձերի գծով սոցիալական վճարի և գուտ աշխատավարձի կտրվածքով հաշվարկները, նախքան 2020թ.-ի հուլիս և 2020թ.-ի հուլիսից մինչև 2022թ.-ի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածները:

*Սոցիալական վճարների հաշվարկման նոր եղանակը կհանգեցնի հետևյալի՝*

- 2020թ.-ի հուլիս ամսին նախորդ ամսվա համեմատ զգալիորեն բարձրանալու է սոցիալական վճարների չափը 500,000 ՀՀ դրամից ավել համախառն եկամուտ ունեցող ֆիզիկական անձանց համար, որի արդյունքում համապատասխանորեն կկրճատվի նաև տնօրինվող եկամուտը:

- Անվանական արտահայտությամբ (գնաճի ազդեցությունը հաշվի չառնելով) 2021-2022թ.-ին եկամտային հարկի դրույքաչափի փոփոխությունը թեև կմեղմի գուտ

եկամուտների կրճատումը, որը կարձանագրվի 2020թ.-ի հուլիսից հետո, սակայն ինչպես 2021թ.-ին, այնպես էլ 2022թ.-ին 500,000 ՀՀ դրամից բարձր համախառն եկամուտ ունեցող ֆիզիկական անձանց զուտ եկամուտները զիջելու են 2020թ.-ի հունիսի մակարդակին:

- 2021թ.-ին, այնպես էլ 2022թ.-ին 2020թ.-ի հունիսի համեմատ 500,000 ՀՀ դրամից բարձր համախառն եկամուտների պարագայում գրանցվելու է նաև իրական զուտ եկամուտների կրճատում՝ գնաձով ճշգրտված:

**Աղյուսակ 2. Եկամտային հարկի, սոցիալական վճարի և զուտ աշխատավարձի փոփոխությունը նախքան 2020թ.-ի հուլիսը և մինչև 2022թ.-ի դեկտեմբերը**

<b>ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՇՎԱՐԿԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ</b>				
Համախառն աշխատավարձ	Եկամտային հարկ	Սոց վճար	Դրոշմանիշային վճար	Զուտ աշխատավարձ
550 000	126 500	12 500	1 000	410 000
650 000	149 500	12 500	1 000	487 000
750 000	172 500	12 500	1 000	564 000
850 000	195 500	12 500	1 000	641 000
950 000	218 500	12 500	1 000	718 000
1 050 000	241 500	12 500	1 000	795 000
<b>ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՇՎԱՐԿԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ</b>				
Համախառն աշխատավարձ	Եկամտային հարկ	Սոց վճար	Դրոշմանիշային վճար	Զուտ աշխատավարձ
550 000	126 500	17 500	1 000	405 000
650 000	149 500	27 500	1 000	472 000
750 000	172 500	37 500	1 000	539 000
850 000	195 500	47 500	1 000	606 000
950 000	218 500	57 500	1 000	673 000
1 050 000	241 500	64 500	1 000	743 000
<b>ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՇՎԱՐԿԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ</b>				
Համախառն աշխատավարձ	Եկամտային հարկ	Սոց վճար	Դրոշմանիշային վճար	Զուտ աշխատավարձ
550 000	121 000	22 500	1 000	405 500
650 000	143 000	32 500	1 000	473 500
750 000	165 000	42 500	1 000	541 500
850 000	187 000	52 500	1 000	609 500
950 000	209 000	62 500	1 000	677 500
1 050 000	231 000	69 500	1 000	748 500
<b>ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՇՎԱՐԿԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ</b>				
Համախառն աշխատավարձ	Եկամտային հարկ	Սոց վճար	Դրոշմանիշային վճար	Զուտ աշխատավարձ
550 000	115 500	27 500	1 000	406 000
650 000	136 500	37 500	1 000	475 000
750 000	157 500	47 500	1 000	544 000
850 000	178 500	57 500	1 000	613 000
950 000	199 500	67 500	1 000	682 000
1 050 000	220 500	74 500	1 000	754 000

Մյուս կողմից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այսպիսի աշխատավարձի մակարդակ ունեցողները, նաև կարող են համարվել հիփոթեքային վարկով բնակարան ձեռք բերած անձինք՝ հատկապես նորակառույցներում, ապա նաև 2021-2026թթ.-ին գույքահարկի բարձացումը հաշվի առնելով՝ կհանգեցնի նրան, որ այդ անձինք դժվարություններ կունենան պահպանելու սպառման տվյալ մակարդակը հիփոթեքային վարկերի մարումների և գույքահարկի բարձրացմանը զուգահեռ: